Վկայակոչված իրավանորմերի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ օժտված է որոշումներ կայացնելու համապատասխան լիազորություններով, ուստի հայցվոր կողմի փաստարկներն այս մասով հիմնավոր չեն:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր Գնումների գործընթացին մասնակցող անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Արամ Մկրտչյանի 26.05.2023 թվականի որոշումը «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու համար, հետևաբար հայցվոր «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊ ընկերության հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

<u>7. Դատական ծախսերի վերաբերյալ եզրահանգում.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Արամ Մկրտչյանի 26.05.2023թ. որոշումը՝ «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, բավարարել:

2. Անվավեր ճանաչել Գնումների գործընթացին մասնակցող անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Արամ Մկրտչյանի 26.05.2023 թվականի որոշումը՝ «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ